

մակ ընդունած է (Չամչեան, Գ., էջ 612):  
Ասոնց վրայ պիտի խօսիմ ուրիշ տեղ:

Յառաջ քան Յանդիմանագրոյն մէջ Չա-  
քարիա Պատրիարքի մասին ըսուածներն յառաջ  
բերելը՝ կ'ուզեմ այստեղ Էջմիածնի Աւետիք  
կաթողիկոսի մասին քանի մը նոր տեղեկու-  
թիւններ տալ: Այս կաթողիկոսին անունը  
Գաւազանագրքերու եւ Պատմագիրներու մէջ  
չկայ: Կ. Պոլսոյ Աղգային Հիւանդանոցի Ընդ.  
Օրացուցին Գաւազանագրքին մէջ ալ հազիւ  
չորս տարի յառաջ գրուեցաւ՝ երբ Գր. Դարա-  
նաղցւոյ ժամանակագրութիւնն ի մասնաւորի  
Ա. Ա. Ալպոյաճեանի ձեռք բանասիրաց ծա-  
նօթացաւ:

Գր. կեսարացւոյ այս Յանդիմանագրին եւ  
Մովս. Ա. ի 1615ի նամակին մէջ յայտնապէս  
կը յիշուի Աւետիք կաթողիկոս, ինչպէս տե-  
սանք: Իսկ Գր. Դարանաղցի իր ժամանակա-  
գրութեան ինծի ծանօթ քանի մը Գլուխներուն  
մէջ՝ երեք տեղ կը յիշէ. 1. Գր. Դարանաղցի  
(էջ 233) կ'ըսէ՝ թէ ՌԾԲԹ թուին (= 1603  
ընդօրինակութեան մէջ սխալմամբ ՌԾԹ գրու-  
ած կամ ընթերցուած), երբ ինքն Երեւան էր,  
Էջմիածնի երեք կաթողիկոսներն Երեւան գու-  
մարուեցան. «Դաւիթն որ առաջին էր, որ ան-  
ցեալ ամին ապաշխարութեամբ եղեւ վախճան  
նորա, որ շատ յերկարեաց կեանք նորա, մինչ  
Ղ (= 90) ամին եհաս, որ էր թվին ՌՁԳ  
(= 1634) որ ի մէջ ապաշխարանաց մեռաւ:  
Ի վերայ սորա էին ի միասին երկու կաթողի-